ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N _____ « » _____ 2024թ.

«ՏԵԽՆՈԻՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(*Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբանցք 14*)

Պատճենը՝ ՀՀ ԿԵ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՂԱՐՇԱԿ ՄԱՏԻԿՅԱՆԻՆ

Պատճենը՝ ՀՀ ԿԵ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին) ս.թ. հունվարի 30-ին թիվ 01/02.1/82-2024 գրությամբ դիմել է վարչապետի աշխատակազմ՝ ներկայացնելով պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2024թ. հունվարի 18-ի թիվ Ե78/24 գրությունը (այսուհետ՝ գրություն) 2023թ. նոյեմբերի 3-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ տեսչական մարմնի կարիքների համար համակարգչային և պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման «ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ:

Մասնավորապես, Ծառայությունը վերոնշյալ գրությամբ հայտնել է հետևյալը.

Տեսչական մարմնի կարիքների համար կազմակերպված «ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2023թ. նոյեմբերի 27-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ կնքված պայմանագրի

մասին հայտարարության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Տեխնոինժիներինգ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02290157) (այսուհետ՝ Ընկերություն):

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Անժելիկա Հովհաննիսյանը:

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02228296)՝ որի սեփականատերն է հանդիսանում Միեր Բարիկյանը, 2023թ. հոկտեմբերի 21-ից մինչև 2025թ. հոկտեմբերի 21-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ծառայության կողմից մատնանշվել է նաև այն փաստը, որ Ընկերության իրական շահառու Անժելիկա Հովհաննիսյանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության սեփականատեր Անժելիկա Հովհաննիսյանը հանդիսանում է նաև «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության տնօրեն:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ (...) գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, *գործադիր տնօրեն*, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ (...): Ընդ որում, Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ *վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:*

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Համադրելով Ծառայության գրությամբ ներկայացված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ «ՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-24/9» և «ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-24/2-1» ծածկագրերով գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտերով ներկայացված հավաստումներն առ այն, որ «Տեխնոինժիներինգ» ՍՊ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի համապատասխանել իրականությանը, քանի որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր հանդիսացող Անժելիկա Հովհաննիսյանը միաժամանակ հանդիսացել է նաև գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2023թ. հոկտեմբերի 21-ից երկու տարի ժամկետով ներառված «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության տնօրեն՝ փաստացի համարվելով վերջինիս հետ փոխկապակցված անձ, որպիսի հանգամանքը ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Հետևաբար, *Ընկերությունը՝ գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտել է իր իսկ կողմից ստանձնված*

պարտավորությունը, որը մինչև Ընկերության հետ պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով՝ վարչապետի աշխատակազմը միակողմանի լուծում է Ընկերության հետ 27.11.2024թ. կնքված ՈՎԱԿՏՄ-ԳՀԾՁԲ-24/9-1 և 22.11.2023թ. կնքված Ν ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-24/2-1 պայմանագրերը:

Միաժամանակ հայտնում եմ, որ վարչապետի աշխատակազմը կձեռնարկի միջոցներ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը լիազորված մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի Ν 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Գասպարյան
Գործերի կառավարչի տեղակալ
Հեռ. 515663
Էլ փոստ՝ lusine.gasparyan@gov.am